ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ ԿԱՌԼԵՆԻ ՇԱՔԱՐՅԱՆ

ԴԵՎՇԻՐՄԵՆ (ՏՂԱՅԱՀԱՎԱՔՆԵՐԸ) ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Է.00.02 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2005

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների թեկնածու,
դոց. Ռ.Ա.Սաֆրաստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ. Ա.Ա.Խառատյան
պատմական գիտությունների թեկնածու,
դոց. Վ.Գ.Ղլեչյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2005թ. սեպտեմբերի 22-ին ժ. 15-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2005թ. օգոստոսի 20-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ.գ.դ. Պ.Չոբանյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանյան կայսրության վարչական համակարգը միշտ եղել է արևելագետների ուսումնասիրությունների կենտրոնում: Այս առումով նրանց ուշադրությունից, անշուշտ, չի վրիպել դեվշիրմե երևույթը, որը հեռավոր գյուղի հասարակ գյուղացու որդուն տեսականորեն հնարավորություն էր ընձեռում դառնալ այս հզորագույն պետության մեծ վեզիր: Մինչդեռ դեվշիրմեի փաստը Օսմանյան կայսրությունում հստակորեն ցույց է տալիս հպատակ երկրների ազգաբնակչության իրավազուրկ ստրկական վիճակը:

Դեվշիրմեի՝ տղայահավաք, մանկահավաք, տղայաժողով, սկզբնավորման բացատրության համար պատմիչների և պատմաբանների կողմից բերվում են մի շարք վարկածներ՝ սկսած օսմանյան սուլթանների «հանճարեղ մտքի փայլատակման» մասին ավանդապատումներից մինչև այս համակարգի՝ Օսմանյան կայսրությունում ժողովրդագրական պայթյունի հետևանք լինելու վերլուծություններ:

Օսմանյան պետությունը մահմեդական նախորդ պետությունների հետնորդն էր և ուստի փոխառել էր նրանց մոտեցումները, սկզբունքները, կառավարման ոճը՝ անշուշտ հետագայում դրանք ձևափոխելով ըստ ստեղծված յուրահատուկ հանգամանքների: Այս երկարատև պատմական երևույթը չէր կարող լինել միանվագ հորինվածքի արդյունք. այն ձևավորվում էր ժամանակի ընթացքում՝ փոխելով շեշտադրումները:

Հետևելով օսմանյան նվաճումների ուղեծրին՝ դեվշիրմեն նախ կիրառվել է բալկանյան քրիստոնյա ազգաբնակչության հանդեպ, և ապա աստիճանաբար իր մեջ ներառել օսմանյան պետության քրիստոնյա այլ հպատակ ազգեր, այդ թվում հայեր: Սույն հանգամանքը դեվշիրմե երևույթն ուսումնասիրող որոշ գիտնականների ընձեռում է հնարավորություն՝ այդ համակարգը նկարագրելիս չնշել հայ ժողովրդի անունը, ինչից օգտվում են մասնավորապես թուրք գիտնականները, որոնք պնդում են, թե հայ ժողովրդից այդ հարկը չի հավաքվել կամ էլ դա տեղի է ունեցել շատ փոքր ծավալներով:

Դա թերևս հետևանք է այն բանի, որ գիտական աշխարհին հայտնի չեն հայոց մեջ կատարված այդ հարկումների վերաբերյալ փաստերը, ինչը խոսում է այն մասին, որ հայ հիշատակարանները, որոնք միջնադարյան Արևելքի ուսումնասիրության հարուստ սկզբնաղբյուր են, պատշաճ կերպով ներկայացված չեն գիտական աշխարհի քննությանն ու ուսումնասիրությանը:

Դեվշիրմեն ցայժմ հայ գիտնականների կողմից չի արժանացել մանրամասն ուսումնասիրության. առավել հայտնի է միայն ակադեմիկոս Մ. Զուլալյանի հոդվածը «Պատմա-բանասիրական» հանդեսում, որը կարելի է համարել սույն հարցի ուսումնասիրության առաջին ու հիմնարար քայլը հայ ժամանակակից օսմանագիտության մեջ: Այս տեսակետից դեվշիրմե երևույթին նվիրված սույն ատենախոսությունը կարևոր գիտական նշանակություն ունի հայ ժողովրդի պատմության մասը կազմող, սակայն թերի ուսումնասիրված այս երևույթի վերհանման համար:

Հայոց ցեղասպանության հերքման քաղաքականության շրջանակներում Թուրքիայի պաշտոնական պատմագրությունը նշում է, որ մինչև XVIII-XIXդդ. հայ ժողովուրդը Օսմանյան կայսրությունում եղել է ամենից արտոնյալը, չի ենթարկվել ճնշումների, բռնությունների: Այս անհիմն պնդումը հերքվում է ի թիվս այլոց նաև սույն ուսումնասիրության արդյունքում, ինչով այն ստանում է այսօր կարևոր քաղաքական նշանակություն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել Օսմանյան կայսրության վարչական համակարգի հիմնասյուներից մեկը հանդիսացող դեվշիրմե համակարգը, դրա իրականացման նպատակներն ու արդյունքները: Դրան հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները: (1) Պարզել դեվշիրմե երևույթի ծագման նախապայմանները. արդյո՞ք, այն իսկապես սուլթանների միանվագ հորինվածքի, թե՞ որևէ այլ երևույթի տրամաբանական զարգացման արդյունք է, ե՞րբ և ի՞նչ նպատակով սկսվեցին դեվշիրմեները Օսմանյան Թուրքիայում: (2) Ուսումնասիրել դեվշիրմեի հետագա զարգացման նախապայմանները. ի՞նչ պարագաներում դեվշիրմե երևույթը ստացավ իր հետագա զարգացումը, որո՞նք էին դրան արագացում հաղորդող պատճառները: (3) Ցույց տալ, որ այդ երևույթը իր լայնածավալ կիրառումն է ունեցել նաև հայ ժողովրդի նկատմամբ; (4) Ուսումնասիրել դեվշիրմե համակարգի զանազան կողմերը. ինչո՞վ էին պայմանավորված հավաքների քանակական չափաբաժինն ու պարբերականությունը, ինչպե՞ս էր կազմակերպվում տղայահավաքը, ի՞նչ սկզբունքով էր տեղի ունենում երիտասարդների ընտրությունը, ինչպե՞ս էր ազգաբնակչությունը խուսափում հավաքներից և այլն: (5) Վերլուծել դեվշիրմեի սոցիալ-տնտեսական կարևորությունը Օսմանյան կայսրության զարգացման տեսակետից. սոցիալ-տնտեսական ի՞նչ հետևանքների էր բերում դեվշիրմեն և ի՞նչ հետևանքների բերեց այդ

համակարգի կիրառման դադարեցումը, տնտեսական ի՞նչ օգուտներ էր բերում սույն համակարգը, ինչպիսի՞ կիրառում էին գտնում սույն համակարգով անցած երիտասարդները օսմանյան վարչական, ռազմական ու տնտեսական կյանքում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման առաջին անգամ է դառնում հատուկ ուսումնասիրության առարկա:

Ներկա աշխատությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվում համակողմանիորեն ուսումնասիրել դեվշիրմե երևույթը, վեր հանել դրա քաղաքական ու սոցիալ-տնտեսական նշանակությունը՝ օգտագործելով օսմաներեն, հայերեն, բուլղարերեն սկզբնաղբյուրներ, ինչպես նաև եվրոպացի ճանապարհորդների հուշեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսությունն ընդգրկում է XV-XVIII դարերը: Ատենախոսությունում ուսումնասիրվում է ինչպես դեվշիրմեի սկզբնավորման, այնպես էլ այս համակարգի առավելագույն վերելքի ու անկման ժամանակաշրջանները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը օսմանյան պետության սոցիալ-տնտեսական իրավիճակի, մարդկային ռեսուրսների կառավարման խնդիրների հետ կապված հարցադրումների ու տեսակետների քննական մեկնությունն է և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները և եզրահանգումները կարող են օգտագործվել հայ ժողովրդի, Օսմանյան կայսրության և ընդհանուր պատմության դասընթացներում:

Սույն ուսումնասիրության արդյունքները կարող են ուրույն ներդրում ունենալ Թուրքիայի գիտական և արտաքին քաղաքական շրջանակների հետ բանավեճերի, ինչպես նաև բանակցությունների ժամանակ: Հայտնի է, որ Հայոց ցեղասպանության փաստը հերքող թուրքական պաշտոնական պատմագրությունը՝ ի դեմս Թուրքական

պատմական ընկերության, միևնույն ժամանակ պնդում է, որ մինչև Ռուսաստանի՝ տարածաշրջան մուտք գործելը Օսմանյան կայսրությունում հայերը չեն ենթարկվել որևիցե ճնշման կամ հալածանքի: Ատենախոսության եզրահանգումները հիմնավորում են սույն պնդումների կեղծ լինելը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն (այդ թվում և օսմաներեն), գերմաներեն, ֆրանսերեն, բուլղարերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Հեղինակը հնարավորություն է ունեցել ծանոթանալու ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանի, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանի, Հայաստանի Ազգային գրադարանի, Դամասկոսի Արաբագիտության Ֆրանսիական Ինստիտուտի գրադարանի, Կահիրեի համալսարանի Արևելագիտության կենտրոնի գրադարանի ֆոնդերում պահվող գիտական նյութերի և մասնագիտական գրականության հետ:

Ուսումնասիրության համար որպես հիմնական սկզբնաղբյուր ծառայել են սուլթանական արքունիքի հրամանագրերի ժողովածուները[1]: Օսմաներեն լեզվով գրված այս հրամանգրերը իրենցից ներկայացնում են կարևոր աղբյուր կայսրության ներքին քաղաքականության ուսումնասիրման խնդրում:

Մյուս կարևոր սկզբնաղբյուրներից են պատմաբան Վ.Հակոբյանի[2] կողմից լույս ընծայված հայ միջնադարյան ժամանակագրությունները, որոնք թեև փոքրածավալ, սակայն կարևոր տեղեկություններ են հաղորդում հայերից տղայահարկի հավաքման մասին, ինչպես նաև Ի.Պետրոսյանի կողմից թարգմանված ու մասնագետների քննությանը ներկայացված «Յենիչերիական զորախմբի օրենքների ծագման պատմություն[3]» տրակտատը:

Առանձնահատուկ արժեք են ներկայացնում թուրք անվանի պատմաբան Ի.Հ.Ուզունչարշըլի[4] աշխատությունները, որոնք թույլ են տալիս լավագույնս հասկանալ կայսրության պետական կառուցվածքն ու պարունակում են բազում կարևոր փաստաթղթերի թարգմանություններ: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ

[1] Üç numaralı mühimme defteri (966-968 / 1558-1560), c.1, Ankara, 1993; Beş numaralı mühimme defteri (973 / 1565-1566), c.1, Ankara, 1994; Altı numaralı mühimme defteri (972 / 1564-1565), c.1, Ankara, 1995; Yedi numaralı mühimme defteri (975-976 / 1567-1569), c.1, Ankara, 1998; On iki numaralı mühimme defteri (978-979 / 1570-1572), c.3, Ankara, 1996;

[2] Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. Ա, Երևան, 1951;

[3] Мебде-и канун-и йеничери оджагы тарихи (История происхождения законов янычарского корпуса), Издание текста, перевод с турецкого, введение, комментарий и указатели И. Петросян, Москва, 1987;

[4] İ. Uzunçarşılı, Osmanlı devlet teşkilâtından kapıkulu ocakları, I, Ankara; İ. Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilatına medhal, İstanbul, 1941; İ. Uzunçarşılı, Osmanlı devletinin saray teşkilâtı, Ankara, 1945;

Ի.Հ.Ուզունչարշըլի մոտեցումները դեվշիրմե երևույթի նկատմամբ զուրկ են անաչառությունից: Թուրք հեղինակի մոտ նկատվում է այս համակարգի միայն դրական կողմերը նշելու, կատարյալ ներկայացնելու, ինչպես նաև հայերի մասնակցությունը նվազագույնի հասցնելու միտում:

Ազգությամբ թուրք մեկ այլ անվանի գիտնական Հալիլ Ինալչիքի աշխատությունները[5] ևս զուրկ չեն սուբյեկտիվիզմից: Այսպես, Օսմանյան պետության տնտեսությանն ու հասարակությանը նվիրված լայնծավալ ուսումնասիրությունում նա շարունակում է հաստատված ավանդույթն ու դեվշիրմեն ներկայացնում որպես քրիստոնյաների համար ռազմական դասակարգ մուտք գործելու փայլուն հնարավորություն: Բացի այդ Հ.Ինալչիքի աշխատություններում նույնպես ընդգծված է Օսմանյան կայսրությունում ամոթալի ու պարսավելի երևույթները և իրադարձությունները մեղմելու միտումը, ինչը համահունչ է թուրք պատմաբանների մեծամասնության ուսումնասիրությունների հետ:

Այս առումով թուրք պաշտոնական պատմագրության մոտեցումների դրսևորում է նաև Յավուզ Էրջանի[6]՝ Օսմանյան կայսրության քրիստոնեաբնակ տարածքների թուրքացման ու մահմեդականացման վրա դեվշիրմեի ազդեցությունը քննարկող հոդվածը, որտեղ նա փորձում է թերագնահատել դեվշիրմե երևույթի նշանակությունը քրիստոնյա հպատակների թուրքացման ու մահմեդականացման խնդրում: Մասնավորապես, նա բերում է այն փաստարկը, թե հավաքները սահմանափակված են եղել միայն գյուղերով, ինչպես նաև գոյություն են ունեցել բազում արտոնություններ: Մեր ատենախոսության շրջանակներում հիմնավոր կերպով հերքվում են սույն փաստարկները, և ցույց է տրվում վերոհիշյալ հոդվածում թուրք պատմաբանի անաչառության բացակայությունը:

Քննադատության արժանի են նաև արևմտյան մի շարք հեղինակների ուսումնասիրություններ, որոնք այս կամ այն կերպ անդրադառնում են նաև դեվշիրմեի խնդրին: Այսպես, Անդրե Քլոն Սուլեյման Փառահեղին նվիրված իր գրքում[7] անթաքույց հիացմունքով է խոսում Օսմանյան կայսրության և մասնավորապես ստրկական համակարգի մասին: Իչ օղլանների համակարգը նա համարում է հոյակապ հնարավորություն քրիստոնյաների համար: Նա մեծ պատիվ է համարում ծառայությունը սուլթանին՝ առանց հաշվի առնելու մարդու անձնական զգացումները՝

[5] H. İnalcik, The Ottoman state: economy and society, 1300-1600, An economic and social history of the Ottoman Empire, 1300-1914, edited by H. İnalcik, D. Quataert, Cambridge, 1996, p. 9-411;

[6] Y. Ercan, Devşirme sorunu, devşirmenin Anadolu va Balkanlardaki türkleşme ve islamlaşma etkisi, Belleten, 1986, Aralık 1987, Ankara, s. 679-726;

[7] A. Clot, Soliman le Magnifique, Paris, 1983;

բռնի կրոնափոխություն, զատում հարազատ միջավայրից, ստրուկի կարգավիճակ: Սակայն վերոհիշյալ անտեսմանը գումարվում է հաջորդը: Հեղինակը որպես իր փաստարկների ապացույց բերում է սուլթան Սուլեյմանի մեծ վեզիր, դեվշիրմեի միջոցով վարչական համակարգ մուտք գործած Ալի փաշայի կենսագրությունը: Ա.Քլոն, սակայն, հաշվի չի առնում այն իրողությունը, որ Ալիի կենսուղին լոկ մեկն է այն հարյուր հազարավորներից, որոնք չեն հասել նման պաշտոնի: Շատ շատերը դարձել են ստրուկ թուրք գյուղացիների մոտ, ենիչերի օսմանյան բանակում, մեծահարուստների սիրեկան:

Արևմտյան գիտնականների մի մասի մոտ տարածված է նաև այն թյուր կարծիքը, թե դեվշիրմեն չի կիրառվել հայերի նկատմամբ կամ կիրառվելու դեպքում կրել վերին աստիճանի հազվադեպ բնույթ: Այսպես, Բեռնարդ Լյուիսը[8] արդի Թուրքիայի ծագման պատմությանը վերաբերող իր գրքում խոսում է միայն բալկանյան ազգաբնակչության՝ դեվշիրմեի միջոցով կայսրության քաղաքական ու ռազմական վերնախավ մուտքի մասին:

Իսկ Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրության հարցում դասական համարվող հեղինակներ Հ.Ա.Ռ.Գիբի ու Հ.Բոուենի[9] աշխատությունում հստակորեն նշվում է, որ հրեաներից բացի դեվշիրմեից ազատված են եղել նաև հայերը. նախ Ստամբուլում բնակվելու, իսկ հայկական հողերի գրավումից հետո այն պատճառով, որ հայերը հրեաների նման վատ զինվորներ են եղել: Նույնիսկ եթե առանց քննության ընդունենք հեղինակների այս վերին աստիճանի անհամոզիչ փաստարկները, հարկ ենք համարում նշել երկու բացթողում. առաջին, նախքան հայկական հողերի գրավումը Օսմանյան կայսրությունում կային հայեր նաև Ստամբուլից դուրս, օրինակ Քյութահիայի ստվար հայկական գաղութը[10], երկրորդ, դեվշիրմե հավաքների հետևանքում հավաքագրված երիտասարդները ոչ միայն համալրում էին ենիչերիական զորախմբերը, այլև ուղարկվում աշխատանքի պալատ, շինարարություններ, գյուղեր կամ վաճառվում ստրուկների շուկաներում: Բացի սրանից դասական համարվող հեղինակները կրկնում են թուրք պատմաբանների առաջ քաշած այն միտքը, թե «դեվշիրմեն ըստ էության դուռ էր դեպի պետության բարձրագույն պաշտոնները»: Այսպես, նրանք առավելություն են համարում Օսմանյան կայսրությունում զիմմի ծնվելը (համաձայն շարիաթի զիմմիներ են կոչվում այն «ժողովուրդները, որոնք ծանոթ են եղել Սուրբ գրքին նախքան Ղուրանի ի հայտ գալը»),

[8] B. Lewis, The emergence of modern Turkey, London, New York, Toronto, 1996;
[9] H.A.R. Gibb, H. Bowen, Islamic Society and the West, Vol. 1, Part 2, London, New York, Toronto, 1951;
[10] Ա. Ալպոյաճեան, Հուշամատյան կուտինահայերու, Բեյրութ, 1961;

քանի որ միայն նրանք էին ենթակա հավաքագրման: Հեղինակները, սակայն, կոպիտ սխալ են թույլ տալիս՝ Օսմանյան կայսրության օրինակով անտեսելով շարիաթի սկզբունքներից մեկը: Համաձայն շարիաթի՝ զիմմիները վճարված հարկի դիմաց իրավունք էին ստանում պահպանել իրենց կրոնը և այլն, իսկ դեվշիրմեն ներառում էր նաև բռնի մահմեդականացում:

Մեկ այլ արևմտյան անվանի օսմանագետ Փ.Վիթեքը[11] դեվշիրմեի՝ շարիաթը խախտելու խնդրին նվիրված իր հոդվածում նշում է, թե օսմանցիները չեն խախտել շարիաթը, քանի որ սերբերը, ալբանացիները և բուլղարները քրիստոնեություն են ընդունել Ղուրանի ի հայտ գալուց ավելի ուշ, ուստի նրանք չեն կարող համարվել զիմմի: Սակայն այս դեպքում անտեսվում է այն անհերքելի փաստը, որ մասնավորապես հայերը քրիստոնեություն են ընդունել Ղուրանի գրվելուց շատ ավելի վաղ, բայցևայնպես հայերի մեջ ևս անցկացվել է տղայահավաք, որի արդյունքում ընտրված երիտասարդները հետագայում բռնի մահմեդականացվում էին:

Դեվշիրմե երևույթի՝ հայերի հանդեպ կիրառելու անհիմն բացասումը կա նաև Սթենֆըրդ Շոուի[12]՝ Օսմանյան կայսրության ու արդի Թուրքիայի պատմության վերաբերյալ աշխատության առաջին հատորում: Այսպես, Շոուն գրում է, որ հայերը ամբողջությամբ ազատված էին դեվշիրմեից այն պատճառով, որ նրանց մեծ մասը բնակվում էր քաղաքներում: Մեր ատենախոսության շրջանակներում մենք անդրադարձել ենք քաղաքային բնակչության՝ դեվշիրմեից համատարած ազատման կարծիքին ու հերքել այն, բացի այդ Ստենֆըրդ Շոուն «մոռանում» է հետագայում նշել, թե ի՞նչ բախտի է արժանանում հետագայում գրավված հայկական գյուղերի բնակչությունը, որը շատ ավելի մեծաքանակ էր քաղաքաբնակներից: Ամերիկացի այս հեղինակի սույն ուսումնասիրությունը առանձնանում է իր միակողմանիությամբ: Այսպես, նա ձգտում է մեղմել բացասական երևույթները՝ ցույց տալով միայն դրական կողմերը. համաձայն Շոուի հավաքված քրիստոնյա տղաներից լավագույնները մուտք էին գործում բանակ ու արքունիք, սակայն նա չի հիշատակում, թե ի՞նչ բախտի են արժանանում նրանք, ովքեր լավագույնների մեջ չէին մտել: Բնականաբար, նրանց չեն վերադարձրել իրենց ընտանիքներին, այլ վաճառել են ստրկական շուկաներում կամ օգտագործել որպես ձրի աշխատուժ:

[11] P. Wittek, Devshirme and sharia, Bulletin of the School of Oriental and African Studies, London, 1955, XVII/2, p. 271-278;
[12] S. Shaw, The history of the Ottoman Empire and modern Turkey, Vol. 1, Empire of Gazis: The Rise and Decline of the Ottoman Empire, 1208-1808, Cambridge, 1985;

Դեվշիրմե երևույթը եղել և մնում է բուլղար պատմաբանների և արևելագետների համակ ուշադրության ներքո: Ուշադրության արժանի են Ցվետանա Գեորգիևայի աշխատությունները: Մասնավորապես, «Еничарите в българските земи[13]» աշխատությունն իր յուրահատուկ տեղն է գրավում սույն հարցի ուսումնասիրմանը նվիրված հետազոտությունների շարքում: Հեղինակը հանգամանալի կերպով ներկայացնում է թե՛ համակարգի հիմնադրմանը նախորդող իրավիճակը կայսրությունում, թե՛ դեվշիրմեի իրականացման ողջ մեխանիզմը, ինչպես նաև խոսում դրա հետևանքների մասին: Աշխատությունը առաձնանում է եվրոպական հարուստ աղբյուրներով:

Խորհրդային և հետխորհրդային շրջանի հեղինակների շարքում հարկ է հիշատակել Մ. Զուլալյանի արժեքավոր աշխատությունը: Ակադեմիկոս Մանվել Զուլալյանն[14] առաջին անգամ հայ ժամանակակից արևելագիտության մեջ անդրադարձել է դեվշիրմե համակարգի խնդիրներին՝ մեծապես օգտվելով հայ ժամանակագրություններից: Զուլալյանը «Պատմաբանասիրական հանդեսում» լույս ընծայված իր այս հոդվածում ներկայացնում է դեվշիրմեի իրականացումը հայերի մեջ: Մանվել Զուլալյանի այս հոդվածի առանձնահատկություններից է նաև այն, որ այստեղ նա հիմնավոր քննադատության է ենթարկում թուրք պատմաբան Ուզունչարշըլըի՝ օսմանյան պետական կառույցում քափըքուլու զորախմբերի պատմությանը նվիրված վերոհիշյալ աշխատությունը:

Ա. Նովիչևը[15] Օսմանյան կայսրությունում ստրկության պատմության վերաբերյալ իր հոդվածում անդրադարձ է կատարում նաև դեվշիրմե ինստիտուտին՝ ներկայացնելով այդ համակարգի էությունը: Նովիչևի սույն ուսումնասիրությունն առանձնանում է վավերագրային հարուստ նյութով: Աշխատանքում, սակայն, զգացվում է նրա ազդեցությունը թուրք պատմաբան Ուզունչարշըլըից, քանի որ բացի օգտագործված մի քանի նույնանում վավերագրերից, Ա.Նովիչևը Ի.Հ.Ուզունչարշըլըի նման սխալմամբ նույնացնում է երկու տարբեր եզրեր՝ «խըլաթ աքչեսին» և «քուլ աքչեսին». «Ենիչերիական կորպուսի օրենքների ծագման պատմություն» ձեռագրի անանուն հեղինակի շարադրության տեքստից պարզ է դառնում, որ «խըլաթ բահասը» հարկը գանձվում էր գյուղի բնակիչներից կախված հավաքված տղաների քանակից, մինչդեռ քուլ աքչեսին՝ «կախված գյուղից», այսինքն գյուղի բնակչության քանակից:

[13] Ц. Георгиева, Еничарите в българските земи, Наука и изкуство, София, 1988;
[14] Մ. Զուլալյան, «Դեվշիրմեն» (մանկահավաքը) օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, ՊԲՀ, Երևան, 1959, #2-3, էջ 247-256;
[15] Новичев А., К истории рабства в Османской империи, Тюркологический сборник 1976, М. 1978, с. 88-108;

Ստրկության համակարգին է վերաբերում նաև պատմաբան Ա. Խառատյանի «Գերության համակարգը Օսմանյան կայսրությունում (XV-XVIIդդ.)[16]» հոդվածը, որտեղ հեղինակը բազմակողմանի ներկայացնում է իրավիճակը կայսրությունում՝ անդրադարձ կատարելով նաև դեվշիրմե համակարգի առանձնահատկություններին:

Սույն հարցի առավել խորը ուսումնասիրման համար առանձնահատուկ արժեք են ներկայացնում Սպերոս Վրյոնիսի[17] հետազոտությունները, որտեղ նա քննարկում է ոչ միայն Օսմանյան կայսրության ժամանակ գործադրված այս համակարգը, այլև անդրադարձ է կատարում սելջուկյան, բյուզանդական և այլ պետություններում առկա նմանօրինակ երևույթներին: Վրյոնիսի հետազոտություններն աչքի են ընկնում խորը վերլուծությամբ, փաստերի անշեղ ներկայացմամբ, ինչպես նաև փաստագրական նյութի հարստությամբ:

Ատենախոսության մեջ բարձրացվող տարբեր հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են Իբն Բատուտայի[18], Իբն Բիբիի[19], եվրոպացի ճանապարհորդ Ստեֆան Գերլախի հուշերը[20], ինչպես նաև բուլղարերեն լեզվով լույս ընծայված փաստաթղթերի ժողովածուն[21], որտեղ կազմող Պետռ Պետռովն առանց մեկնաբանությունների ներկայացնում է այնպիսի արժեքավոր նյութեր, ինչպես դեվշիրմեի մասին սուլթանական հրամաններ, եվրոպացի ճանապարհորդների հուշեր, ժամանակագիրների տրամադրած տեղեկություններ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, չորս գլուխներից, վերջաբանից, տերմինաբանական բառարանից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

ԱՌԱՋԱԲԱՆԻ մեջ հիմնավորվում է թեմայի նշանակությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացվում աշխատանքի նշանակությունը, տրվում օգտագործված

[16] Ա. Խառատյան, Գերության համակարգը Օսմանյան կայսրությունում (XV-XVIIդդ.), «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 2001, #1, էջ 25-33;
[17] S. Vryonis, Jr., The Decline of Medieval Hellenism in Asia Minor and the Process of Islamization from the Eleventh through the Fifteenth Century, Berkley, Los Angeles, London, 1986; S. Vryonis, Byzantine and Turkish societies and their sources of manpower, p. 140-172, in War, Technology and Society in the Middle East, edited by V. Parry and M. Yapp, London, 1975; S. Vryonis, Review of Upsprung and Wesen by B.Papoulia, Balkan Studies, 5 (1964), p. 145-153; S. Vryonis, Seljuk Gulams and Ottoman Devshirmes, Der Islam, Band 41, 1964, p.224-252;
[18] Ibn Batoutah, Voyages, trad. par G. Defrémery et B. Sanguinetti, Paris, T. I-IV, 1893-1922;
[19] Ibn Bibi (el-Huseyin b. Muhammed b. Ali el-Caferi er-Rugadi), el-Evamirü'l Ala'iye fi'l-Umuri'l-Ala'iye (Selçukname), hazirlayan M. Öztürk, 2 cilt, Ankara, 1996 (այսուհետև՝ Ibn BIbi); H. Duda, Die Seltschukengeschichte des Ibn Bibi, Kopenhagen, 1959 (այսուհետև՝ Duda);
[20] Стефан Герлах. Дневник на едно пътуване до Османската порта в Цариград, Подбор, превод, увод и коментар М. Киселинчева, Предговор и редакция Б. Цветкова, София, 1976;
[21] По следите на насилието, Документи и материали за налагане на исляма, Съставител П. Петров, Част първа, София, 1987;

սկզբնաղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը, պարզաբանվում աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը:

Աշխատության առաջին գլուխը՝ «ԴԵՎՇԻՐՄԵ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՆՐԱ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ» անդրադառնում է ուսումնասիրվող երևույթի նախապատմությանը, զարգացման առանձնահատկություններին ու նշանակությանը:

Ատենախոսության առաջին գլուխը բաժանված է երեք ենթաբաժինների: Առաջին գլխի առաջին ենթաբաժինը վերնագրված է «*Մարդկային ռեսուրսների կառավարման օրինակները նախաօսմանական մահմեդական հասարակությունում*»:

Մի կողմից իսլամի գոյության վաղ տարիներին նրա լայն տարածումը, մյուս կողմից նվաճողական հիմնական գաղափարին մահմեդականների նվիրումը անմիջապես ստեղծեցին մի շատ լայն անդունդ՝ անհրաժեշտ ռազմուժի աճող կարիքի և Արաբական թերակղզում առկա բավականին սահմանափակ մարդկային ռեսուրսների միջև: Խալիֆ Օմարը (634-644) հրամայեց ամենագրավիչ պայմաններով որպես մահմեդական ռազմուժ հավաքագրել պարտված թշնամական միավորներին, ինչով դրվեց մամլուքյան համակարգի հիմքը[22]: Նման խնդրի բախվում են մի քանի դար հետո նաև Սելջուկյանները: Փոքր Ասիայի Սելջուկյանների մոտ առավել տարածված էր ղուլամների համակարգը: Ղուլամները սովորաբար հավաքագրվում էին երիտասարդ հասակում, ապա բերվում արքունիք՝ համապատասխան կրթություն ու պատրաստվածություն ստանալու[23]: Ղեկավարվող տարածքներում լեզվական, ազգային ու կրոնական միության բացակայության պայմաններում ղուլամական համակարգը հասավ նշանակալի նվաճումների: Երիտասարդ ղուլամների հիմնական աղբյուրն էր մասնավորապես «պատերազմի աշխարհը» (այն երկրները, որոնք դեռ չէին ընդունել մահմեդականություն), քանի որ սելջուկները պատերազմներ էին մղում Տրապիզոնի ու Նիկեայի հույների[24], Կիլիկիայի հայերի[25] դեմ: Այսպիսով, երբ օսմանցիները դիմեցին դեվշիրմեի, փոքրասիական տարածքների քրիստոնյա երիտասարդների օգտագործումը պետական ծառայության մեջ արդեն ուներ գրեթե երեքդարյա պատմություն:

Երկրորդ ենթաբաժինը վերնագրված է «*Փենջիքը որպես մարդկային ռեսուրսների կառավարման միջոց*»: Այստեղ հիմնական շեշտը դրվում է փենջիք երևույթի ուսումնասիրության վրա, որը Օսմանյան պետությունում գործում էր

[22] D. Ayalon, Preliminary remarks on the Mamlūk Military Institution in Islam, War, Technology and Society in the Middle East, Ed. V. Parry and M. Yapp, London , 1975, p. 44-45;
[23] S. Vryonis, Seljuk Gulams and Ottoman Devshirmes, Der Islam, Band 41, 1964, p.225;
[24] Duda, p.63;
[25] Ibn Bibi, s.85-86; Duda, նույն տեղը, p.238;

մանկահավաքից առաջ: Հարկվում էին պատերազմի ժամանակ գերի վերցրած զորահրամանատարները և զինվորները. գանձվում էր ռազմագերու արժեքի մեկ հինգերորդը[26]: Փենջիքը կիրառվում էր նաև գերի ընկած քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ. գերյալ քրիստոնյաները պարտավոր էին թուրքերին հանձնել կա՛մ իրենց յուրաքանչյուր հինգ հոգուց մեկին՝ թուրքական բանակի շարքերը լրացնելու նպատակով, կա՛մ համապատասխան փրկագին[27]: Այն սկիզբ էր առնում Ղուրանից ու շարիաթի հարկային համակարգում մահմեդականներից գանձվող ամենակարևոր հարկերից մեկն էր[28]:

Երրորդ ենթաբաժնում («*Անցում փենջիքից դեվշիրմեի*») քննարկվում է դեվշիրմեի առաջացմանը բերած զարգացումը, ինչով հերքվում է մանկահավաքի՝ սուլթանների հանձարեղ հորինվածք լինելու վարկածը: Փենջիքը չէր բավարարում օսմանցիների մարդկային ռեսուրսների պահանջը[29]: Նոր պայմաններում, չնայած օսմանյան անվիճելի հաջողություններին, հնարավոր չէր անսահմանափակ գերել գրավյալ տարածքների ազգաբնակչությանը: Ձևավորվել էր ավատատիրական նոր դասակարգ, և այլևս անհնարին դարձավ տիրույթները զրկել աշխատավոր ձեռքից, առանց որի դրանք այլևս գոյություն չէին ունենա: Հողերի ամայացումը հակասում էր նաև կենտրոնական իշխանության շահերին: Այս իրավիճակում օսմանյան իշխանությունը սկսեց բռնությամբ հավաքել քրիստոնյա բնակչության երեխաներին: Սկզբնապես քրիստոնյա երիտասարդության հազվադեպ և փոքրաքանակ հավաքները դարձան հաճախակի և զանգվածային ու ի վերջո օրինականացվեցին որպես պարտադիր հարկ:

Ամեն նվաճման հետ մեկտեղ կրկնվում էր փենջիքից դեվշիրմե անցման գործընթացը:

Երկրորդ գլուխը՝ «ԴԵՎՇԻՐՄԵ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ», ուսումնասիրության է ենթարկում հավաքների կազմակերպման սկզբունքները և գործընթացները:

Երկրորդ գլուխը բաժանված է չորս ենթաբաժինների: Առաջին ենթաբաժինը վերնագրված է «*Դեվշիրմե հավաքների անցկացման մեխանիզմը*»: Մանկահավաքի հայտարարումը տեղի էր ունենում ենիչերիական զորաբանակի աղայի պահանջով, որը

[26] Փենջիք բառը հենց առաջացել է պարսկերեն "pandj yak"-ից՝ 1/5: Այն հավասարազոր է արաբական khums-ին (Pendjik, The Encycopedia of Islam, edited by B.Lewis, Ch. Pellat and J. Schacht, Leiden, 1995, Vol. VIII, p. 293-294);
[27] Մ. Զուլալյան, «Դեվշիրմեն» (մանկահավաքը) օսմանյան կայսրության մեջ..., էջ 248;
[28] Толкованние священного корана на арабском и русском языках, Каир, 2000г., Аль Анфаль, 41-42;
[29] Y. Ercan, Devşirme sorunu..., s.712;

հատուկ նամակով խնդրում էր սկսել դեվշիրմեի նախապատրաստումը[30]: Դրա հիման վրա սուլթանի գրասենյակը հրապարակում էր համապատասխան հրովարտակ՝ հյուքմ, որը զորահավաք հռչակող փաստաթղթին համարժեք նշանակություն ուներ:

Հայտնի է հրովարտակների երեք տիպ: Առաջինները հասցեագրված են բեյլերբեյիներին (վիլայեթների ղեկավար նշանակված զինվորական պաշտոնյա). այստեղ տեղեկացվում է առաջիկա հավաքի վերաբերյալ ու հրամայվում ուղարկել բնակավայրեր հատուկ տեսուչների, որոնք պետք է օժանդակեն տղայահավաքի անցկացմանը[31]: Մի քանի այլ հրովարտակներ ուղղված են շրջանների քադիներին (դատավոր), որոնցից պահանջվում էր տեղեկացնել հպատակներին հավաքների անցկացման մասին, ապահովել բոլոր տղաների ներկայությունը իրենց հայրերի հետ միասին: Հրովարտակների երրորդ տիպը, որոնք նույնպես ուղարկվում էին շրջանների քադիներին, տղայաժողովների ժամանակ պահակախմբերին էր վերաբերում: Նրանք պետք է ապահովեին ճանապարհների ու կայանումների պաշտպանությունը:

Տղաների ընտրությունն անց էր կացնում անձնապես հրամանատար սպան, որի մոտ առաջին հերթին ներկայանում էր բնակավայրի քահանան՝ իր հետ բերելով գրանցամատյանը[32]:

Ընտրությանը սկզբունքները քննարկում է երկրորդ ենթաբաժինը, որը վերնագրված է «*Հավաքվող տղաների տարիքը և դեվշիրմե հավաքի որակական կողմը*»: Եվրոպական աղբյուրները ընդհանրապես տեղեկացնում են 7–12 տարեկան մանուկներին հավաքելու մասին, իսկ սուլթանական հրովարտակները խոսում են ավելի շատ պատանիների՝ 15–20 տարեկանների մասին: Հակասությունը բացատրելի է: Իշխանության հրահանգները ցույց են տալիս նորմը, իսկ եվրոպական աղբյուրները՝ կիրառությունը, պրակտիկան, որը նշանակալիորեն տարբերվում էր: Կարևորություն էր տրվում ոչ թե իրական, այլ կենսաբանական տարիքին՝ 14–20 տարեկան[33]: Սա նշանակում է, որ հավաքում էին արդեն ամուր ֆիզիկական տվյալներով տղաների, որոնց արժեքային համակարգը միաժամանակ դեռ լիովին ձևավորված չէր և ենթակա էր ազդեցության:

Հավաքի ժամանակ երկրորդ կարևոր կետը տղայաժողովի որակական կողմն է: Սուլթանական հրովարտակներում սա ձևակերպված է ածականների գերադրական աստիճանի օգնությամբ՝ ամենաուժեղ, ամենազեղեցկատես, ամենախելացի,

[30] İ. Uzunçarşılı, Osmanlı devlet teşkilâtından kapıkulu ocakları, I..., s.14;
[31] По следите на насилието..., 236-237;
[32] İ. Uzunçarşılı, նույն տեղում, էջ 16:
[33] Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 83;

ամենաառողջ: Չէին հավաքում տղաներին, որոնք ամուսնացած էին, թլպատված կամ գիտեին թուրքերեն: Արգելված էր հավաքագրել նաև հրեաների ու գնչուների: Երբեմն արգելում էին հավաքել նաև տղաների, որոնք բնակվում էին քաղաքում կամ էլ արհեստի տիրապետում: Քաղաքաբնակներին չհավաքագրելու կետը միշտ չէ, որ կիրառվում էր, քանի որ մենք տեղեկություններ ունենք, որ դեվշիրմեի հավաքագրում անց է կացվել նաև Աթենքում[34], Սոֆիայում[35] ու այլ քաղաքներում:

Դեվշիրմեից ազատված էին բնակչության փոքրաթիվ կատեգորիաներ, որոնք ունեին հատուկ պարտավորություններ: Սակայն այդ արտոնությունները երկարատև չէին: 1621թ. հավաքի սուլթանական հրամանում կատեգորիկ կերպով նշվում է, որ եթե որոշ բնակչությունը ցույց տա դեվշիրմեից ազատման փաստաթուղթ, ապա դա այլևս պետք չէ համարել վավեր[36]:

Երրորդ ենթաբաժինը վերնագրված է «*Դեվշիրմե հավաքների ժամանակ իրականացվող չարաշահումները և բնակչության խուսափումը հավաքներից*»: «Արյան հարկը» դառնում էր էլ ավելի ծանր պաշտոնյաների ու տեղական իշխանությունների չարաշահումների արդյունքում: Իրենց գործողություններով նրանք վնաս էին հասցնում նաև կառավարությանը, դրա հետևանքով կառավարությունն ստիպված էր լինում ժամանակ առ ժամանակ պատժել մեղավորներին: Դրա մասին են վկայում ատենախոսությունում մեջբերված սուլթանական հրամանները[37]:

Լայն տարածում գտած կաշառակերության, շորթման մասին գրում են թե՛ օսմանյան, թե՛ եվրոպական աղբյուրները[38]: Կաշառքի օգնությամբ տղաներին դեվշիրմեից ազատելու մասին է գրում նաև հայ պատմագիր Երեմիա (Չելեբի) Քյոմուրճյանը («...մեծատունք շատ ոսկւով զորդիսն հազիւ են զերծուցեալ...[39]»):

Եվրոպացի ճանապարհորդ Ստ. Գերլախը գրում է բազում մարդկանց մասին, որոնք դեվշիրմե հավաք անցկացնելու իրավունք էին գնում: Հետևաբար այս ոլորտում ևս կապալառու համակարգը լայնորեն տարածված էր[40]:

Քրիստոնյա հպատակները դիմում էին դեվշիրմեի դեմ պայքարելու ամեն մի միջոցի՝ օրինական ու ապօրինի: Օրինական միջոցների շարքին են պատկանում

[34] V. Menage, Devshirme, Encyclopedia of Islam, 1991, Leiden, Vol. II, p.211;
[35] Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 85-86 ;
[36] По следите на насилието..., с. 239-240;
[37] Beş numaralı mühimme defteri..., s. 83; İ. Uzunçarşılı, Osmanlı devlet teşkilâtından kapıkulu ocakları, I..., s.16, 18;
[38] А. Новичев, К истории рабства ..., с. 94;
[39] Ե. Քեօմիւրճեան, Պատմութիւն համառոտ ՂԶ տարիոյ օսմանցոց թագաւորացն, աշխատասիրությամբ՝ Ժ.Ավետիսյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1969, էջ 145 ;
[40] Стефан Герлах. Дневник ..., с. 179;

առաջին հերթին փոքրահասակ տղաների ամուսնությունները[41]: Որոշ մայրեր հուսահատությունից հաշմանդամ էին դարձնում իրենց որդիներին: Ավելի հաճախ ծնողները թաքցնում էին իրենց զավակներին, երբ հայտնվում էին դեվշիրմե հավաքող պաշտոնյաները[42]: Կան շատ դեպքեր, երբ քրիստոնյա ընտանիքները դիմադրել են դեվշիրմե հավաքին[43]:

Մի շարք հրամաններում Բարձր Դուռը արտահայտում է իր դժգոհությունը դեվշիրմեով հավաքագրված տղաների փախուստի կապակցությամբ[44]:

Դեվշիրմեից խուսափումների մասին վկայումները թույլ են տալիս անել մեկ այլ կարևոր մտահանգում, որը հերքում է որոշ արևմտյան, հիմնականում թուրք պատմաբանների այն տեսակետը, թե հպատակ ժողովուրդը «երջանիկ էր», որ դեվշիրմի միջոցով պետությունն իրենց որդիներին «հնարավորություն էր ընձեռում» դուրս գալ գավառային արատավոր շրջանից, հասնել պաշտոնի, հարստության, փառքի: Նրանք մանկաժողովի համակարգով հավաքագրումը հավասարեցնում են մեր օրերի հեղինակավոր համալսարաններ կրթաթոշակ ստանալուն: Վերոշարադրյալը ապացուցում է հակառակը. քրիստոնյա հպատակների համար մանկահավաքը շատ ծանր պարտավորություն էր, որից նրանք ամեն գնով ձգտում էին խուսափել:

Դեվշիրմե ինստիտուտի ազդեցության ուսումնասիրման համար կարևոր է նաև պարզել, թե որքան տղա էր հավաքվում դրա արդյունքում: Սա ենթարկվում է քննության այս գլխի վերջին՝ չորրորդ ենթաբաժնում, որի վերնագիրն է «*Դեվշիրմե հավաքների անցկացման պարբերականությունը և քանակական չափաբաժինը*»: Դեվշիրմեի երեքդարյա ընթացքում հավաքման պարբերականությունը, փոփոխվում էր: Եվրոպական աղբյուրները տարբեր թվեր են հայտնում դեվշիրմեի պարբերականության մասին՝ հիմնականում 3-5 տարի: XVI դարում հավաքները երբեմն տեղի էին ունենում նույնիսկ ամեն տարի: Ակնհայտ է, որ հավաքների հաճախակիացումը XVI դարում կապված է այն բանի հետ, որ թուրքերը նվաճողական պատերազմներ էին վարում հսկայական տարածության վրա՝ Վիեննայից արևմուտքում մինչև Թավրիզ արևելքում ու Կահիրե հարավում[45]:

Մեկ այլ էական հարց ևս կարևոր է դեվշիրմեի նշանակության ուսումնասիրման խնդրում. տղայահավաքների քանակական չափաբաժինը: Բարթոլոմեո դե Յանոն

[41] Նույն տեղում;
[42] Yedi numaralı mühimme defteri..., s. 18;
[43] Beş numaralı mühimme defteri..., s. 159, 161 ; İ. Uzunçarşılı, Osmanlı devlet teşkilâtından kapıkulu ocakları, I..., s.21, 104;
[44] Altı numaralı mühimme defteri..., s. 314, 138; 12 numaralı mühimme defteri..., s. 143, 165;
[45] А. Новичев, К истории рабства..., с. 92-93 ;

հարկն անվանում է տղաների տասանորդ[46], չնայած դա կարող է դիտվել որպես հանրահայտ հարկային եզրի օգտագործում եվրոպացու համար անսովոր հարկը նկարագրելիս: XV դարի երկրորդ կեսին եվրոպացիները սկսեցին որակել հարկը որպես quinquinal, այսինք մեկ հինգերորդ: XVI դարի երկրորդ կեսով թվագրված դեվշիրմեի վերաբերյալ օսմանյան մի օրենքի համաձայն պետք է ժողովվեր ամեն 40 տնտեսությունից մեկ տղա[47]: Սակայն այս նվազագույն նորման հերքվում է գրեթե բոլոր եվրոպացիների կողմից, որոնք նկարագրել են իրավիճակը օսմանյան կայսրությունում:

Դեվշիրմեի երեքդարյա ժամանակաշրջանի ընթացքում փոփոխվել է հավաքի պարբերականությունը, չի հաստատագրվել մեկ հավաքի առավելագույն չափաբաժինը, ինչը մեծ տարբերությունների տեղիք էր տալիս. այս ամենը կասկածի տակ է առնում բոլոր հաշվարկների ստույգ լինելը:

Երրորդ գլխում փորձ է արվում ուսումնասիրել «ԴԵՎՇԻՐՄԵՈՎ ՀԱՎԱՔՎԱԾ ՏՂԱՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ»:

Առաջին ենթաբաժինը վերնագրված է «*Կրոնափոխություն և անվանափոխություն*»: Դեվշիրմեով ընտրված երիտասարդներին հավաքում էին խմբերի մեջ: Տղաները ցուցակագրվում էին ու նկարագրվում լիարժեք անհատական նկարագրությամբ: Սա ուղղված էր նրան, որ ճանապարհի ընթացքում անհնարին լիներ փախուստը կամ նրանց փոխումն այլ պատանիներով: Հավաքած երեխաները տարվում էին Կ.Պոլիս, երբ տղաների խումբը հասնում էր 100-200 հոգու: Կոնստանդնուպոլսում նրանք տեղակայվում էին ենիչերիական զորամասերում: Այստեղ նրանց ստիպում էին պաշտոնապես հրաժարվել քրիստոնեությունից ու ընդունել մահմեդականություն[48]:

Երրորդ գլխի երկրորդ ենթաբաժինը՝ «*Իչ օղլաններ*», ուսումնասիրում է դեվշիրմեով հավաքագրված այն երիտասարդների ճակատագիրը, որոնք ուղարկվում են սուլթանականան պալատներ: Մեհմեդ II-ի կառավարման տարիներից մինչև XVII դարի կեսերը սրանք էին կառավարչական վերնախավի հիմնական պահեստային ուժերը:

Տղաները նախ ենթարկվում են մանրամասն ընտրության, ինչից հետո նրանք պետք է որոշ ժամանակ կրթություն ստանային: Պալատական դպրոցը մեծ ներդրում է ունեցել ունակ վարչական աշխատուժ պատրաստելու գործում, որի նշանակությունը

[46] По следите на насилието..., с. 215 ;
[47] Г. Гълъбов, Един закон и други държавни документи по собирането на момчета за еничари - Годишник на Софийския университет, Историко-филологически факултет, Т.35, Кн.6, София, 1939, с. 24 մեջբերում ըստ А. Новичев, К истории рабства..., с. 93
[48] Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 88;

հատկապես զգացվեց դեվշիրմե համակարգի դուրս մղվելուց հետո, երբ պաշտոնների էին բերվում մարդիկ, որոնք այստեղ հասել էին կաշառքի կամ ծանոթության միջոցով և չէին ստացել հին օրերի կրթությունը:

Հիմնականում հենց իչ օղլանների համակարգի ընձեռած հնարավորություններն են վերագրվում ողջ դեվշիրմե համակարգին, և որոշ պատմաբաններ պնդում են, թե դեվշիրմեն թույլ էր տալիս հասարակ քրիստոնյային դառնալ նույնիսկ մեծ վեզիր: Սակայն շեշտենք, որ դրա հարաբերակցությունն է միայն մեկն ընդդեմ տասնյակ հազարավոր կյանքերի:

Երրորդ ենթաբաժինը վերաբերում է «*Աջեմի օղլաններին*»: Մուրադ I սուլթանի ժամանակ աջեմի զորախումբ առաջին անգամ հիմնվում է Գելիբոլուում: Առաջին աջեմիները փենջիքով հավաքված տղաներն էին: Աջեմի զորախումբ ընդունվող տղան մինչև XVII դարասկիզբը պետք է անպայմանորեն տրված լիներ գյուղ՝ ծառայելու թուրքերին: Չնայած համաձայն օրենքի աջեմի օջախից ենիչերի էին նշանակում միայն յոթից ութ տարի ծառայությունից հետո, սակայն գործնականում դա տեղի էր ունենում ըստ պահանջի:

Ռազմական, ինչպես նաև պետության ամրապնդման առումով մեծ կարևորություն ուներ ենիչերիական զորաբանակը: Միջնադարյան եվրոպական պետությունները չստեղծեցին կանոնավոր հետևակ: Դրա դերը կատարում էին օտարերկրյա վարձկանները: Մինչդեռ ենիչերիական զորաբանակն արհեստավարժ մշտական զորք էր, որն ստանում էր ռոճիկ, ապրում զորանոցներում, ազատ էր տնտեսական կամ ընտանեկան հոգսերից: Նրանց արգելված էր ամուսնանալ կամ առևտրով զբաղվել: Ենիչերիները նաև շատ կարևոր գործոն էին հպատակ քրիստոնյաների ծուլման քաղաքականության մեջ: XVI դարից սկսած ենիչերիական զորանոցներ էին տեղակայվում կայսրության ողջ տարածքով մեկ: Գավառակում տեղակայված ենիչերիական զորանոցը իր երկարատև ազդեցությունն էր թողնում շրջակա բոլոր գյուղերի ազգաբնակչության վրա: Հեռու լինելով մայրաքաղաքից՝ ենիչերիները հեռու էին նաև լուրջ վերահսկողությունից, ուստի դիմում էին բազում կամայականությունների, սակայն իրարից նրանք գտնվում էին բավական մոտ տարածության վրա, որպեսզի կարիքի դեպքում իրար օգնության հասնեին: Ենիչերիներն անտեսում էին, մասնավորապես, չամուսնանալու արգելքը և գյուղերում անց էին կացնում այս անգամ աղջկաժողովներ՝ տանելով տարածքի ամենագեղեցիկ սերունդը:

Չորրորդ ենթաբաժինը վերնագրված է «*Ստրուկներ*» և վերաբերում է դեվշիրմեով հավաքագրված այն երիտասարդների ճակատագրին, որոնք ոչ վարչական և ոչ էլ ռազմական ոլորտներում են օգտագործվել, այլ ստրկացվել են:

Դեվշիրմե համակարգով հավաքված քրիստոնյա երեխաները մի քանի անգամ ավելի շատ էին, քան պահանջվում էր ենիչերիական զորաբանակը համալրելու համար: Այս կապակցությամբ դեվշիրմե համակարգի ուսումնասիրողների առջև մի հարց է ծառանում. «Ի՞նչ ճակատագրի են արժանացել այն մնացյալ քրիստոնյա երիտասարդները»: Պատասխանը հստակ է. նրանք օգտագործվում էին որպես ծրի, ստրկական աշխատանքային ուժ[49]: Սակայն ի տարբերություն իչ օղլանների և աջեմի օղլանների նրանց ստրկությունը իրենց արտոնություն չէր բերում: Հավաքված երիտասարդության մեծ մասն ուղարկվում էր աշխատելու ավատատերերի մոտ:

Ընդհանուր առմամբ ստրուկները ուսումնասիրվող դարաշրջանում կազմում էին ներկայսերական, տարածաշրջանային, ինչպես նաև միջազգային առևտրի կարևոր «ապրանքներից» մեկը: Այդ առևտուրը մեծապես կարևորվում էր նաև օսմանցիների կողմից: XIV դարասկզբում ստրկավաճառության աճը վկայում է այն մասին, որ թուրքերին ավելի ձեռնտու էր վաճառել ստրուկներին եվրոպացիներին, քան օգտագործել իրենց տարածքներում որպես աշխատուժ[50]:

Վերջին՝ չորրորդ գլուխը վերնագրված է «ԴԵՎՇԻՐՄԵՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՅԱՆՔՈՒՄ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՎԱՐՏԸ» և բաժանված երկու ենթաբաժնի:

Առաջին ենթաբաժնի վերնագիրն է «*Դեվշիրմեի անցկացումը հայ ժողովրդի մեջ*»: XVI դարի հայ աղբյուրները վկայում են «դեվշիրմեի», պարբերաբար կրկնվող «տղայաժողովների» մասին: Սակայն մենք փաստ ունենք նաև այն մասին, որ հայերից մանկահավաք կատարվել է դեռևս 1464 թվականին[51]:

Կարևոր է նշել, որ մանկահավաքները հայկական նահանգներում համեմատած Բալկանյան երկրների հետ սկսվել են ավելի ուշ և կատարվել ավելի հազվադեպ, քան Բալկաններում: Այսպես, ըստ մանր ժամանակագիրների տվյալների, հայերից մանկահավաքներ կատարվել են 1464, 1519, 1531, 1536, 1543, 1547, 1550, 1590, 1622 թվականներին[52]:

---

[49] В. Мутафчиева, Аграрните отношения в Османската империя през 15-16в., София, 1962., с.153;
[50] Ch. Verlinden, L'Esclavage dans L'Europe medieval, T.2, Gent, 1977, p.825 цит. по К. Жуков, Торговые связи Венеции и Генуи с эгейскими эмиратами Айдын и Ментеше (XIV - начало XV в.), Тюркологический сборник 1979, М., 1985, "Наука", с.37;
[51] Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480), Եր., 1958, էջ 216;
[52] Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ..., էջ 169-171;

Դա պետք է բացատրել նրանով, որ Օսմանյան կայսրության վիճակն ասիական մասում համեմատաբար ավելի կայուն էր: Արևմտյան Հայաստանում որպես մշտական հսկողություն օգտագործվում էր քուրդ ավատատերերի ռազմական ուժը: Հենց դրանով պետք է բացատրել այն կարևոր հանգամանքը, որ մանկահավաքներ եղել են գերազանցապես բուն Հայաստանից դուրս՝ անդրեփրատյան հայաշատ քաղաքներից: Որ բուն Հայաստանից ևս կատարվել են մանկահավաքներ վկայում է 1531 թվականի մի ծեռագրի հիշատակարան[53]:

Դեվշիրմեով հավաքված հայերից ամենից բարձր աստիճանի է հասել թերևս Հալիլ փաշան, որը երկու անգամ դարձել է Օսմանյան կայսրության մեծ վեզիրը (1616-1619թթ.; 1626-1628թթ.) [54]:

Երկրորդ ենթաբաժինը ներկայացնում է «*Դեվշիրմեի ավարտը*»: Դեվշիրմեն գործածության մեջ էր ողջ XVI դարի ընթացքում, կան նաև բազում փաստաթղթեր, որոնք վերաբերում են նաև XVII դարի առաջին կեսին: Ենիչերիական զորամասերի, ինչպես նաև ստրկական համակարգի այլ պահանջների համար դեվշիրմեի հավաքագրման մասին փաստերը նոսրանում են XVII դարի երկրորդ կեսի վերաբերյալ փաստաթղթերում: Ակնհայտ է, որ չնայած հիշատակումների նոսրության, դեվշիրմեն հանկարծակի կերպով չի անհայտացել, այլ իր մահն է ապրել տասնամյակներ շարունակ: Օսմանյան կայսրությունում դեվշիրմեն սկիզբ է առնում XIV դարավերջից ու հասնում մինչև XVIII դարի սկիզբը՝ տևելով ավելի քան 3 հարյուրամյակ:

ՎԵՐՋԱԲԱՆՈՒՄ վերլուծվում է դեվշիրմեի նշանակությունը պետության տարբեր ոլորտների տեսանկյունից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դեվշիրմեն օսմանյան պետության համար դրականորեն տարբերվում էր փենջիքից մի շատ կարևոր տեսանկյունից. փենջիքի ժամանակ օսմանյան պետությունը ստիպված բավարարվում էր այն մարդկային ռեսուրսներով, որ գերի էր ընկել, այսինքն չուներ ընտրության համեմատաբար լայն հնարավորություն, մինչդեռ դեվշիրմեի դեպքում այդ ընտրությունը մեծ դեր էր կատարում, ինչը մեծապես բարձրացնում էր մատակարարավող մարդուժի որակական հատկանիշները: Պետությունը հետայսու արդեն հնարավորություն ստացավ կառավարել իր ռազմուժի մատակարարումը՝ կարիքի դեպքում խտացնելով կամ նոսրացնելով դեվշիրմե հավաքների պարբերականությունը և կամ քանակական չափաբաժինը:

[53] Մ. Զուլալյան, «Դեվշիրմեն» (մանկահավաքը) օսմանյան կայսրության մեջ..., էջ 251;
[54] İ. Danişmend, İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi, 3. cilt, İstanbul, 1950, s. 112, 501, 545-546;

- Սույն ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ դեվշիրմեն փաստորեն նաև աշխատուժի վերաբաշխման մեկ այլ հարմար եղանակ էր: Մարդուժով առավել հարուստ տարածքներից հավաքվում էր որոշ քանակությամբ աշխատուժ և ուղարկում մարդուժով համեմատաբար աղքատ, հետևաբար թույլ գյուղատնտեսություն ունեցող վայրեր. այսպիսով փորձ էր արվում ապահովել պետության ողջ տարածքում համեմատաբար հավասար զարգացում, ինչը կատարում էր նաև իր կայունացնող գործառույթը տնտեսության վրա:

- Տղաներին գյուղեր աշխատելու ուղարկելիս պետությունը ոչ միայն վաճառում էր նրանց ավատատերերին, այլ շատ հաճախ նրանց պարզապես վարձով էր տալիս: Տղաների համար հավաքվող գումարը մեկ անձի հաշվով չնչին էր, սակայն մեծ գումար էր կազմում՝ հաշվի առնելով նրանց բազմաքանակությունը: Եկամտի երկրորդ աղբյուրը դեվշիրմեների ուղղակի վաճառքն էր որպես ստրուկներ օսմանյան մայրաքաղաքի կամ այլ քաղաքների ստրկական շուկաներում:

- Տղայահավաքներն իրենց ուրույն դերն են ունեցել նաև Օսմանյան կայսրությունում զանգվածային բռնի մահմեդականացման ու թուրքացման քաղաքականության համատեքստում:

Այսպիսով, տղայահավաքն ուներ երկարաժամկետ ազդեցություն և իրենից ներկայացնում էր օսմանյան պետության հաջողության ճակատագրական գործոններից մեկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Շաքարյան Ա., Դեվշիրմե համակարգի սկզբնավորման հարցերի շուրջ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, Երևան, 2004թ., էջ 440-449;
2. Շաքարյան Ա., Բռնագաղթն ու մանկահավաքը որպես Օսմանյան կայսրությունում ժողովրդագրական վերադասավորման միջոցներ, «Մերձավոր Արևելք», II, Երևան, 2005թ. էջ 59-62;
3. Շաքարյան Ա., Մարդկային ռեսուրսների կառավարումը մահմեդական աշխարհում մինչև օսմանյան պետության կազմավորումը, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», Երևան, 2005թ., էջ 6-15;

ШАКАРЯН АРТАК КАРЛЕНОВИЧ

ДЕВШИРМЕ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02. - «Всеобщая история»

Защита состоится 22-го сентября 2005 г. в 15 часов в 006 спец.совете по адресу: 375019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 25г, Институт востоковедения НАН РА.

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению системы девширме, периодического насильственного рекрута мальчиков христианских подданных Османской империи, систематично происходившего с конца XIV в. до начала XVIII в.

По своему содержанию и широкому спектру рассматриваемых вопросов эта работа является первым исследованием подобого рода в отечественном востоковедении.

В диссертации использованы такие основополагающие первоисточники как ежегодные сборники султанских указов, средневековые армянские хроники, дневники европейских путешественников. Кроме этого была использована научная литература на армянском, английском, болгарском, турецком, русском, французском, немецком языках.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, терминологического словаря и библиографии.

Во введении обосновывается актуальность и важность темы исследования, дается краткий обзор источников и литературы, использованных в работе, формулируются цель и задачи данного исследования, разъясняются методологические основы работы, описывается структура диссертации и ее практическое значение.

В первой главе диссертации («Система девширме, ее начало и развитие») рассматриваются прецеденты и предшествующие системы, а также факторы, стимулировавшие утверждение девширме в Османской империи. В частности, на основе исторических фактов в работе подвергается критике утверждение об "изобретении" османскими султанами девширме как системы, которая на самом деле является своеобразным развитием института рабства, имевшего место в доосманском мусульманском обществе. Использование рабов в армии и администрации корнями уходит во времена халифа Омара (634-644). Впоследствии на Востоке широко применялась система гуламов. До периодически проводимых наборов девширме (конец XIV в.) и даже параллельно с ними в Османской империи использовалась система пенджик, согласно которой одна пятая часть военнопленных отдавалась в собственность государства.

Во второй главе («Некоторые аспекты проведения наборов девширме») исследуются механизмы проведения девширме, качественные критерии отбираемых мальчиков, количественные квоты и периодичность наборов. Наборы осуществлялись при помощи всех звеньев управленческой системы и непосредственно реализовывались самим янычарским корпусом. Строго установленной периодичности, а также количественных квот не было - каждый набор был специфичен и соответствовал условиям времени. В главе также рассмотрены примеры сопротивления христианских подданных, которые тем или иным образом противились проведению девширме.

Третья глава («Последующая участь рекрутов») посвящена судьбе набранных мальчиков, часть которых после насильственной исламизации направлялась в различные военные учереждения или в систему административного управления империи, а остальные - отдавалась в рабство. Необходимым звеном процесса подготовки этих человеческих ресурсов была психологическая обработка, которая проводилась как в период многолетнего пребывания мальчиков в турецких семьях, так и в янычарских корпусах или придворных школах. Количество набираемых мальчиков, как правило, в несколько раз превосходило нужды армии или администрации. Излишки направлялись на рынок труда, в частности продавались в рабство. Развитие работорговли в XIV-XVI вв. показывает, что туркам было выгоднее продавать рабов венецианцам, чем использовать их на своей территории как рабочую силу.

Четвертая глава («Девширме в жизни армянского народа и конец этой системы») освещает проведение наборов среди армянского населения. Армянские средневековые хроники свидетельствуют, что они не обходили стороной армянских подданных, как на территории исторической Армении, так и за ее пределами. В частности, приведена краткая биография одного из многочисленных армянских мальчиков, отобранных в рамках исследуемой системы - великого везиря Халил паши (времена правления - 1616-1619гг.; 1626-1628гг.).

Конец девширме был результатом длительного процесса разложения османской военно-феодальной системы. К концу XVII в. система уже не функционировала, а спорадические наборы длились еще до начала XVIII в.

В заключении работы сделаны выводы по основным рассмотренным в диссертации вопросам, а также проанализировано значение девширме для различных сфер государственного управления Османской империи.

Работа может представлять интерес для изучения истории армянского народа, Османской империи, а также других христианских народов, входящих в состав Османской империи.

ARTAK SHAKARYAN
DEVSHIRME IN THE OTTOMAN EMPIRE